ՀՀԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳԴ ՊՐՈՑ»ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Սովորողների ուսուցման արդյունավետությանը նպաստող մեթոդների և ռազմավարությունների կիրառումը ուսումնական առարկայի դասավանդման գործում »

ԱՌԱՐԿԱ՝ տարրական դասարանների

ուսուցիչ

ՀԵՂԻՆԱԿ՝ Նաիրա Հովհաննիսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Ախլաթյանի միջնակարգ դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Ֆլորա Հովհաննիսյան

2023

Բովանդակություն

Ներածություն……...3

Գրականության ակնարկ ……..5

Փաստերի և բացահայտումների վերլուծություն ……...……8

Դասի պլան 1……..……9

Դասի պլան 2 ……..……10

Դասի պլան 3……12

Եզրակացություն……15

Գրականության ցանկ……17

Մարդկային բանականությունն ունի երեք բանալի, որոնք բացում են ամեն ինչ՝ թիվ, տառ, նոտա:

Գիտենալ, մտածել, երազել: Ամեն ինչ դրա մեջ է:

Վ. Հյուգո

Ներածություն

Աշխատելով Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Ախլաթյան գյուղի միջնակարգ դպրոցում՝ բախվել եմ այն խնդրին, թե ինչ մեթոդներով կարելի է ճիշտ կազմակերպել դասապրոցեսը, աշակերտների մոտ առաջացնել մրցակցելու կարողություն, որպեսզի ուսուցումը ավելի արդյունավետ լինի:

ՀՀ կրթական համակարգում արմատական բարեփոխումները վկայում են, որ ուսուցման պահանջվող որակի ապահովման հիմնախնդիրների լուծումը պայմանավորված է ուսուցման նորագույն մեթոդների կիրառումով: Գաղտնիք չէ, որ ուսուցման ավանդական մեթոդները, ավելի ճիշտ՝ գիտելիքներ սերտել տալու մեթոդներն այսօր չեն կարող ապահովել ուսման որակ և ստեղծարար կարողությունների զարգացում: Դասավանդողներն այսօր ուսուցման մեթոդների ընտրության մեծ հնարավորություններ ունեն: Խնդիրն այն է, թե մենք որքանով ենք տիրապետում ուսուցման ժամանակակից մեթոդներին, ուսուցման նպատակով մեր կողմից ընտրված կամ արդեն կիրառվող մեթոդները որքանով են համապատասխանում մեր դասավանդած առարկաների ուսումնական նպատակներին: Այս նպատակով որոշեցի ուսումնասիրել և հետազոտել Ախլաթյանի միջնակարգ դպրոցի առաջին, երկրորդ և երրորդ դասարանում անցկացվող ուսումնական գործընթացը:

Այս հետազոտության գլխավոր նպատակն է՝ ապահովել կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններով.

- Աշակերտների ճանաչողական ակտիվություն
- Ուսումնական գործընթացի մեջ աշակերտների ակտիվ ներգրավում
- Ինքնագործունեության խթանում
- Ստեղծագործական մտքի զարգացում
- Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում

Արդի մանկավարժության գերխնդիրներից է ընտրել ուսուցում-ուսումնառություն գործընթացի ակտիվացման և արդյունավետության բարձրացման եղանակներ: Դրա լուծման համար, բնականաբար, պահանջվում է տևական աշխատանք: Այսօր արդեն ձևավորվել են մի շարք մոտեցումներ:

Ուսուցիչն իր աշխատանքում միշտ պետք է աչքի առաջ ունենա ուսումնական գործընթացի կառուցվածքը՝ չմոռանալով երեք գլխավոր հիմնահարց.

- ուսման/ուսուցման ***նպատակը*** *(*Ինչու՞ սովորել/ սովորեցնել *)*
- ***բովանդակությունը*** *(*ի՞նչ սովորել/սովորեցնել*),*
- ***ռազմավարությունը,*** ձևերն ու մեթոդները ինչպե՞ս սովորել (սովորեցնել)):

Արդի մանկավարժության գերխնդիրներից է ընտրել ուսուցման-ուսումնառության գործընթացի ակտիվացման և արդյունավետության բարձրացման եղանակներ:

Ակտիվ ուսուցման ձև է ցանկացած իրավիճակ, երբ աշակերտները սովորում են շարժվել ինչ-որ բան անելով, ինչպես նաև կարդում է, գրում կամ պարզապես լսում ուսուցչին, սակայն ակտիվ է ընկալումն ու ուսուցման ամբողջ գործընթացը: Եթե սովորելու ընթացքում աշակերտներն ակտիվ չեն, նրանք չեն կարող լիովին ընդգրկվել ուսումնական աշխատանքի մեջ՝ իրենց ուժերի չափով:

Ակտիվ ուսուցումն ունի արդյունավետ կիրառում, եթե աշակերտները գտնվում են գործուն իրավիճակներում: Դա աշակերտներին խրախուսում է մասնակցել ուսումնառության գործընթացին՝ վարժվելու, կատարելագործելու ստացած գիտելիքները կիրառելու, ինչպես նաև խթանում է ստեղծագործական ուժերը և ինքնուրույն մտածողությունը:

Ակտիվ ուսուցում, իրենից ներկայացնում է այնպիսի ուսումնական գործընթացի կազմակերպում և կառավարում, որը նպատակաուղղված է սովորողների կրթական և ճանաչողական գործունեության լիարժեք ակտիվացմանը՝ ինչպես մանկավարժական (դիդակտիկ), այնպես էլ կազմակերպչական-կառավարման լայն, համակողմանի գործիքակազմով (Վ. Ն. Կրուգլիկով, 1998)

Գրականության ակնարկ

Ակտիվ ուսուցումը, իրենից ներկայացնում է այնպիսի ուսումնական գործընթացի կազմակերպում և կառավարում, որը նպատակաուղղված է սովորողների կրթական և ճանաչողական գործունեության լիարժեք ակտիվացմանը՝ ինչպես մանկավարժական (դիդակտիկ), այնպես էլ կազմակերպչական-կառավարման լայն, համակողմանի գործիքակազմով (Վ. Ն. Կրուգլիկով, 1998):
Դպրոցում ուսուցման ակտիվացումը կարող է հանգեցնել ինչպես ուսուցման ձևերի և մեթոդների բարելավմանը, այնպես էլ ուսուցման գործընթացի կազմակերպման և կառավարման եղանակների կամ պետական կրթական համակարգի կատարելագործմանը:
Լուրջ դրական վերջնարդյունքների հասնելու նախապայմանը համարվում է բարձրագույն ուսումնական կառույցների և պատասխանատու պետական մարմինների ակտիվ մասնակցությունը ինչպես մանկավարժական, այնպես էլ ղեկավարման ակտիվացման գործընթացին, այսինքն՝ ուսուցման գործընթացի բոլոր կողմերի ակտիվ մասնակցությունը՝ չբացառելով հենց նրանց կողմից տարբեր միջոցների և մեթոդների ավելի լայն ներդրումն ու կիրառումը:
Մանկավարժության ամբողջ պատմությունը կարելի է դիտարկել որպես աշակերտի դերի մասին երկու հակադիր հայացքների պայքար: Առաջին տեսակետի կողմնակիցները պնդում էին, որ սովորողը պետք է պասիվ վիճակում լինի, նրանք սովորողին դիտարկում էին որպես մանկավարժական ազդեցության առարկա՝ մանկավարժի ներգործող դերի կրող կողմ, իսկ ակտիվություն, նրանց կարծիքով, պետք է ցուցաբերեր միայն դասավանդողը: Երկրորդ տեսակետի համակիրները սովորողին համարում էին ուսումնական գործընթացի լիիրավ մասնակից և կարևորում էին նրա ակտիվությունը:
Արդյունավետ ուսուցման համակարգերը ներառում են տարբեր ռազմավարություններ: Կարևոր է ոչ միայն կրթել բովանդակությունը, այլ նաև, թե ինչպես օգտագործել համապատասխան ռազմավարությունները: Երեխաներին կարդալ սովորեցնելիս անհրաժեշտ է նրանց սովորեցնել, թե ինչպես բառեր անգիր անել, ինչպես նաև ռազմավարություն, որը կխորացնի նրանց հասկացողությունը: Մաթեմատիկա դասավանդելիս մենք պետք է նրանց սովորեցնենք խնդիրների լուծման ռազմավարությունը:

Ակտիվ ուսուցման կենտրոնում աշակերտն է: Նա պետք է գործի, աշխատի, մասնակցի գիտելիքների հայտնաբերմանը և պատասխանատվություն ստանձնի դրա ամրակայման համար: Պատահում է այնպես, որ ուսումնական գործընթացում աշակերտները լուռ նստած լսում են: Հենց այս տարիքից երեխաների մեջ «բույն են դնում » ծուլությունը և անպատասխանատվությունը: (Օգտվել եմ Նախաշավիղ 2.2015 գիտամեթոդական ձեռնարկից):

Նման մեկուսացումը աշակերտների համար դառնում է անհրապույր և ձանձրալի: Երբեմն երեխաները միմյանցից ավելի շատ բան են սովորում, քան ուսուցչից:

Ակտիվ ուսուցման սկզբունքներն են՝ փոխազդեցությունը, փոխուսուցումը, սովորողի ակտիվությունը, համագործակցությունը, ինքնահաստատման խրախուսումը և հետադարձ կապը:

Աշխատանքի պատկերացումը սկզբից մինչև վերջնական արդյունք նշանակում է գործը նախաձեռնել նպատակի հստակ գիտակցմամբ և իմանալ, թե դեպի ու՞ր ես գնում… Այդ դեպքում առավել հստակ ես պատկերացնում, թե տվյալ պահին որտեղ ես և ինչ քայլեր ես ձեռնարկում: Ակտիվ ուսուցման վերաբերյալ հստակ պատկերացում ձևավորելու համար, ասենք, որ այն ուսուցչի աշակերտի միջև փոխգործակցություն է, երբ աշակետ-ուսուցիչ հաղորդակցության ընթացքում սովորողները պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի և ընդհանրապես ուսումնառության ***ակտիվ մասնակիցներ:***

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների կիրառում, որոնք ոչ թե նախատեսում են ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների մատուցում և մտապահում սովորողների կողմից, այլ ակտիվ ճանաչողական գործունեության միջոցով գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսումնական գործընթացի ակտիվացման արդյունքում ակտիվ մեթոդների և հնարների կիրառումը դառնում է առաջնային գիտելիքի ձեռքբերման միջոց, նպաստում է մտածողության զարգացմանը, հմտությունների և կարողությունների ձևավորմանը:

Այսպես, որպես ակտիվ ուսուցման և կազմակերպման ձև կարևորվում է խաղը:

Խաղն առաջ է բերում ոգևորություն և ակտիվ մասնակցություն: Այն նպաստում է երեխաների թե բանավոր խոսքի և թե ստեղծագործական մտածողության ու հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

Ճանաչողական գործընթացների զարգացումը (խոսք, հիշողություն, մտածողություն) ապահովելու նպատակով դասի ընթացքում ազդարարվում է խաղ-դադար:

Ուսումնական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար պետք է կատարել զարգացնող արդյունավետ աշխատանք, բազմաբնույթ մտածողության կիրառման օգնությամբ: Ուսուցման հիմնական միջոցը **դասն է,** հետևապես դասի ամեն մի րոպեն պետք է օգտագործել մտածված ու արդյունավետ: Տարրական դասարաններում հարկավոր է անընդհատ փոփոխել երեխայի զբաղմունքը, որ նա և կարդա, և գրի, և նկարի, և երգի, և հաշվի, և խաղա: Տարբեր զննական պարագաների, նկարների, խաղերի միջոցով մատուցվող նյութն առավել լավ է ընկալվում:

Ինչպես նշել է հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանը՝ « Խաղը մարդու օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է: Կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, դա նրա ձևն է, նրա մեթոդն է: Եվ ամեն բան, ինչ որ նրան տրվում է խաղով, ուրախությունով ընդունում է, հեշտ էլ յուրացնում՝ առանց ձանձրանալու, առանց հոգնելու»:

Խաղի մեջ կարելի է լուծել ուսումնական բոլոր խնդիրները՝ հատկապես կրտսեր դպրոցում: Հատկապես ոչ թե դասը բաժանել ուսումնական աշխատանքի և խաղի, այլ պարզապես խաղը տարածել ուսումնական գործընթացի մեջ և ուսումնական

նպատակներն իրականացնել խաղի օգնությամբ և խաղի միջոցով: Ուսուցման ընթացքում խաղի կիրառումը զարգացնում է երեխայի ուշադրությունը, օգնում ուսուցչին ակտիվացնել անհամարձակ երեխային. չէ՞ որ խաղալիս երեխան իրեն լրիվ ազատ է զգում: (Օգտվել եմ Նախաշավիղ 2.2015 գիտամեթոդական ձեռնարկից):

Իմ ուսուցման պրակտիկայում հատկապես վերջին տարիներին լայնորեն կիրառել եմ այնպիսի տեխնոլոգիաներ, որոնց հիմքում ընկած է խաղային մոդելավորումը: Այս տեխնոլոգիաներն առանձնանում են իրենց բազմազանությամբ և արդյունավետությամբ և մեծ պահանջարկ են վայելում մեր ժամանակներում:Խաղային ուսուցումը ենթադրում է տարբեր հիմնախնդիրների լուծումներ՝ կապված մասնագիտական գործունեության, մարդկային փոխհարաբերությունների, անձնական դժվարությունների հետ:

Խաղային ինտերակտիվ տեխնոլոգիաների հնարավորությունները բավական լայն են:

ա. Դրանք թույլ են տալիս ընդգրկել հիմնախնդիրների լայն ասպեկտ:

բ. Համապատասխանում են գործունեության տրամաբանությանը:

գ. Նպաստում են ուսումնական գործընթացի մասնակիցների՝ առավել մեծ թվով

ընդգրկմանը, նրանց մղում են ակտիվության:

դ. Ավելի հեշտությամբ են հաղթահարվում կարծրատիպերը, շտկվում ինքնագնահատականը:

ե. Հնարավորություն են ստեղծում համակողմանի վերլուծություններ, մեկնաբանություններ կատարելու և ստացված արդյունքները իմաստավորելու:

զ. Նպաստում են անձի բոլոր որակների՝ անհատական դրական և բացասական

ընդունակությունների արտահայտմանը և այլն:

Երեխաները և ընդհանրապես սովորողները հեշտությամբ են ներգրավվում խաղային գործունեության ոլորտ, և ինչքան այն բազմազան է, այնքան ավելի գրավիչ է դառնում:

Խաղերը խոսքային գործունեությունը մոտեցնում են կատարյալ նորմերի, նպաստում են զարգացնելու հաղորդակցական հմտություններ, ապահովում են ուսուցման գործնական ուղղվածությունը: Խաղերը աշակերտների մոտ զարգացնում են հետևողականություն, կենդանություն են հաղորդում դասին, բարձրացնում են առարկան սովորելու հետաքրքրությունը: Ուսուցման և դաստիարակության հաջողությունը ապահովվում է ոչ միայն ուսումնամեթոդական համակարգերի մեջ դրված մեթոդական տարրերի հաջորդականությամբ, այլ նրանց մատուցման ստեղծագործական մոտեցմամբ, որը հետագայում թույլ է տալիս աշակերտների մոտ ձևավորել սովորելու պահանջմունք, արդյունավետ աշխատելու հմտություն, զարգացնել նրանց մտավոր կարողությունները, խոսքային ակտիվությունը,

ցուցաբերել ստեղծագործական ակտիվություն և ինքնուրույնություն:

Փաստերի և բացահայտումների վերլուծություն

Այսպիսով, կատարած հետազոտությունների արդյունքում, եկա այն համոզմունքին, որ ուսուցումը առավել արդյունավետ դարձնելու միջոց է խաղը:

«Առանց խաղի չկա և չի կարող լինել ամբողջական մտավոր զարգացում: Խաղը մի մեծ լուսավոր պատուհան է, որի միջոցով երեխայի հոգևոր աշխարհը, կյանքը լցնում է պնդումների, գաղափարների հոսքով: Խաղը կայծ է՝ հարցասիրության և հետաքրքրասիրության վառվող կրակ»: Վ. Ա. Սուխոմլինսկի

Դասարաններում տեսնելով ուսուցման ոչ այնքան բարձր մակարդակ, որոշեցի դասերը փորձարկել խաղերի միջոցով: Խաղը դինամիկ, շարժունակ տեխնոլոգիա է, որի կիրառումը զարգացնում է երեխաների ուշադրությունը, օգնում ուսուցչին՝ ակտիվացնելու անհամարձակ երեխային: Խաղը երեխայի կենսաբանական ներքին պահանջմունք է: Խաղի միջոցով երեխան ճանաչում է իրեն շրջապատող այն երևույթները, որոնք ի հայտ են գալիս նաև խաղային իրավիճակներում: Խաղը հանդիսանում է հաղորդակցման, ուսուցման և կյանքի փորձի ձեռքբերման միջոց:

Առաջարկվող խաղային տեխնոլոգիայի նպատակը կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակության զարգացումն է: Իսկ կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակությունը սովորողների կողմից շրջակա միջավայրի գիտակցական ընկալման, բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի դրսևորման գործընթաց է: Էկոլոգիական բովանդակությամբ խաղերի ուսուցողական խնդիրը երեխայից գաղտնի է մնում, երեխային թվում է, թե ինքն ուղղակի խաղում է, մինչդեռ ձեռք է բերում բնաճանաչողական գիտելիքներ: Ինչպես գիտենք դերային խաղերի միջոցով աշակերտների մոտ ձևավորվում են պատասխանատվություն, դա կնպաստի դասանյութը կարդալիս առավել ուշադիր լինելուն: Դերային խաղի միջոցով սովորողը ձեռք է բերում մի շարք հմտություններ. խոսքի և արտահայտչականության զարգացում ,ընթերցանության հմտությունների զարգացում, աշխատանք խմբերով մեդիահմտությունների զարգացում, տեխնոլոգիական հմտությունների զարգացում ,երաժշտության, պատկերի, գույների զգացողության, ճաշակի զարգացում անկաշկանդ ինքնարտահայտվելու կարողություն, ինքնահսկում:Համատեղ ստեղծված աշխատանքի հաջող լինելու դեպքում այն կարող է վերածվել թատերական ներկայացման: Այս մեթոդի կիրառման միջոցով սովորողները, ինչպես նաև դասավանդողը, կսովորեն խաղալ իրենց «դերը» կյանքում:Ինչպես ասում էր Վ. Շեքսպիրը՝ «Կյանքը թատրոն է, մարդիկ՝ դերասաններ»:

Դասի պլան 1

Մայրենի 3-րդ դասարան

Ուսուցչի անունը՝ Նաիրա Հովհաննիսյան

Դասարանը՝ III դասարան
Ամիս-ամսաթիվ՝ 02,10,23թ
Առարկան՝ Մայրենի
Դասի տևողությունը՝ 45 րոպե
Դասի նպատակը՝ ա) աշակերտների մեջ սերմանել բարություն, ազնվություն, ունեցածը կիսելու կարողություն:
բ) բարձրացնել ուսուցման որակի արդյունավետությունը:
գ) աշակերտների մեջ ձևավորելև զարգացնել ազգային արժեհամակարգը
Վերջնարդյունքները՝

- սովորողները բարձրաձայն կընթերցեն տեքստը՝ սահուն, գրական շեշտի և առոգանության պահպանումով
- ***կիմանան՝*** ինչ է արմատը և ածանցը՝ դասից գտնելով և ներկայացնելով
- ***Կկարողանա՝*** ճիշտ գրել ուղղագրական արժեք ներկայացնող բառերը (օր.՝ ավտոմեքենա, ճյուղ, ձգել, միանգամից և այլն):
- ***կտիրապետեն՝*** վարժ և առոգանությամբ կարդալու կարողությանը, և վերարտադրել դասանյութը
- ***կգիտակցեն՝*** աղջկա կատարած սխալը՝ տալով ճիշտ մեկնաբանություն

Խնդիրները՝
Կրթական՝ սովորողները պետք է կարողանան կազմել հոմանիշների և հականիշների զույգեր, նաև կկարողանան գաղափար տալ արմատի և ածանցի մասին և բերել օրինակներ:
· ***Զարգացնող՝*** աշակերտները կկարողանան առոգանությամբ կարդալ դասը և կփորձեն վերարտադրել այն
· ***Դաստիարակչական՝*** աշակերտները կկարողանան հասկանալ աղջկա կատարած սխալ քայլը՝ տալով մեկնաբանություն և այդ սխալի վրա նրանք կգիտակցեն, որ մարդ պետք է բարի, ազնիվ, կամեցող և ազնիվ լինի:
Անհրաժեշտ սարքավորումներ՝ դասագիրք, պաստառներ, համակարգիչ, որով կներկայացվեն ՏՀՏ գործիքներով պատրաստած սահիկաշարեր
Ուսուցչի օժանդակ ռեսուրսներ՝ ուսումնական ձեռնարկ, համակարգիչ
Դասի ընթացքը՝
Դասի թեման՝ « Ինչ ասաց խնձորենին » Մաս 1
Դասի խթանման փուլում՝ առավել հարմար է օգտվել « Տ-աձև » աղյուսակի մեթոդից 10 րոպե
Գրատախտակը բաժանել երկու մասի զախ կողմում գրել «լավ արարք», աջ կողմում՝ «վատ արարք»

Դասի իմաստի ընկալման փուլում՝ ուսուցիչը կարդում է տեքստը ընդմիջումներով՝ հարցեր առաջադրելով աշակերտներին, թե արդյոք կարող են զուշակել շարունակությունը, նորից շարունակում ընթերցել: 5 րոպե
Դասի կշռադատման փուլում՝ կազմակերպում մենք ՏՀՏ գործիքներով պատրաստած խաղը՝ պարզելու նպատակով աշակերտները հասկացել են դասը: 10 րոպե
Ֆիզդաստար՝ խաղ-վարժություններ 5 րոպե
Գնահատումը՝ Ուսումնական արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը ըստ ուսումնական առարկաների՝ չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխանձեռք բերած գիտելիքների ու հմտություններիմակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորմանը (ՀՊՉ, IX, կետ 37) Հանրակրթական ուսումնական հաստատությունում ընթացիկ գնահատումն իրականացվում է քանակական (միավորային) և ձևավորող (ուսուցանող) ձևերով: 5 րոպե

Դասի պլան 2
Մայրենի 1-ին դասարան

Այս դասը անց եմ կացրել Ախլաթյանի միջնակարգ դպրոցի առաջին դասարանում՝ **Ա ա տառի ուսուցման** ժամանակ:

Դասի թեման՝Ա հնչյուն տառի ուսուցում

Դասի նպատակները և խնդիրները

- Ամրապնդել պատմության, նախադասության,բառի,վանկի,հնչյունի մասինունեցածգիտելիքները նկարողանալեզրույթներնօգտագործելխոսքում:
- Կառուցելպարզգծապատկերներ:
- Տարբերակելձայնավորևբաղաձայն հնչյունները:
- Միտքնարտահայտելկապակցվածխոսքիմիջոցով:
- Կատարելբառերիհնչյունայինվերլուծություն:
- <<Ա>>հնչյունի ընկալում,տեղիորոշումբառիմեջ:

- Աշակերտների մեջ դաստիարակել սեր հայրենիքի նկատմամբ,հայրենիքը պահպանելու ձգտում:

Դասի վերջնարդյունքները

- Կիմանան տառանունը,կկարողանան տարբերել տառը և հնչյունը
- Կկարողանան վանկատել բառեր,կտարբերեն միավանկ և բազմավանկ բառեր
- Կկարողանան լսել,հասկանալ և ճիշտ վերարտադրել հնչող խոսքը
- Կկարողանան իրավիճակին համապատասխան ոչ ծավալուն բանավոր տեքստ կազմել
- Կկարողանան կարդալ ու գրել Աա հնչյուն-տառը
- Կկարողանան տրամաբանական հաջորդականությամբ վերարտադրել նկարի բովանդակությունը
- Կկարողանան գործնականում կիրառել բառակապակցական գիտելիքները
- Կկարողանան նկարագրել,բնութագրել կերպարները
- կկարողանան կազմել բառեր,որտեղ Ա,ահնչյունը բառասկզբում, բառամիջում,բառավերջում է

Դասի պլան 3

Մայրենի 2-րդ դասարան

Ուսուցչի անունը՝ Նաիրա Հովհաննիսյան

Դասարանը ՝ 2-րդ դասարան
Ամիս-ամսաթիվ ՝ 22.11.22թ
Առարկան ՝ Մայրենի
Դասի տևողությունը ՝ 45րոպե
Դասի թեման ՝Հ.Թումանյան«Տերևաթափ»
Դասի նպատակը ՝ ա) աշակերտների մեջ զարգացնել ինքնուրույն կարդալու կարողություն
բ) սովորեցնել մտածել և կանխագուշակել տեքստի հետագա ընթացքը
գ) կարողանալ դասի վերաբերյալ վերլուծություններ կատարել
դ) կարողանալ պատմել բանաստեղծությանը կցված նկարը
Խնդիրները ՝·
Կրթական ՝ երեխաները կկարողանան ուղղագրական արժեք ներկայացնող բառերը ճիշտ և գեղեցիկ ձեռագրով գրել գրատախտակին, օր՝ տերևաթափ, հագնել, ոսկի, թև, երգ
· ***Զարգացնող*** ՝ աշակերտները կկարողանան վարժ և առոգանությամբ կարդալ դասը
· ***Դաստիարակչական*** ՝ նրանց մոտ ձևավորել գեղեցիկը տեսնելու, ճանաչելու և գնահատելու կարողություններ, դաստիարակել ազգային արժեհամակարգեր
Վերջնարդյունքները ՝

- **կիմանա** դասանյութի մեջ առկա ուղղագրական արժեք ներկայացնող բառերի ուղղագրությունը
- **Կկարողանա** նյութի վերաբերյալ կատարել վերլուծություն
- **կտիրապետի** ճիշտ և առոգանությամբ կկարդալուն, նաև կկարողանան արտասանել բանաստեղծությունը
- **կգիտակցի** իր կատարած սխալները և կաշխատի վերացնել դրանք
- **Անհրաժեշտ սարքավորումներ** դասագիրք, տետր, գրիչ, համակարգիչ, պրոյեկտոր, թղթից կտրատած տերևներ, նաև բնական գույնզգույն տերևներ

Դասի ընթացքը
Դասի խթանման փուլում օգտվել Մտագրոհ մեթոդից, գրատախտակի վրա գրում ենք դասի վերնագիրը, աշակերտները առանց երկար-բարակ մտածելու ասում են, թե ինչ են հասկանում, օր՝ տերևաթափ, աշուն, տերև, անձրև, միրգ և այլն: Այն կատարելուց հետո նրանք կխաղան ՏՀՏ գործիքներով պատրաստված այս խաղը:
Դասի թեմայի մեկնաբանություն՝ դասի թեման վերաբերում է տերևաթափին, աշնանը
Դասի իմաստի ընկալում՝ Իմաստի ընկալման փուլում ուսուցիչը կարդում է բանաստեղծությունը, այնուհետև համակարգչով միացնում է աշնան մասին մի

ստեղծագործություն, նրանք դիտում են: Դիտելուց հետո օգտվում ենք Քառաբաժան մեթոդից

1. Ինչ եմ տեսնում
2. Ինչ եմ զգում
3. Ինչ եմ լսում
4. Ինչ իմացա

Դասի կշռադատման փուլում կատարվում է անդրադարձ խթանման փուլում կատարած աշխատանքին, կատարվում է նոր վերնագրի ընտրություն և հանձնարարում է տնային աշխատանք
Տնային աշխատանքի հանձնարարում՝ գրել աշնանային տերևները նկարագրող մի քանի բառ և կազմել նախադասություններ

Տերևաթափ
Հովհաննես Թումանյան

-Այ՜ փոքրիկներ, ա՛յ սիրուններ,-
Ասաց քամին տերևներին,-
Աշուն եկավ, մոտ է ձմեռ,
Ի՞նչ եք դողում ծառի ծերին:
Ոսկի, դեղին, վառ ծիրանի
Գույներ հագե՛ք խայտաբղետ
Ու ճյուղերից ձեր մայրենի
Եկե՛ք ինձ հետ, փախեք ինձ հետ…
Տերևները հենց լսեցին,
Նախշուն-նախշուն գույներ հագան,
Սվսվալով տխուր երգեր՝
Քամու թևին թռա՛ն, փախա՛ն:

Դաս 1. Այս դասը անց եմ կացրել 3-րդ դասարանում: Այնտեղ սովորում են 5աշակերտ: Աշակերտները պատրաստվել էին դասին: Տղաներն ավելի ակտիվ էին մասնակցում, քանի աղջիկները, բայց երբ սկսեցինք խաղը պատրաստված ՏՀՏ գործիքներով նրանք նույնպես ներգրավվեցին դասապրոցեսին: Դասին ներկա էին նաև ուսուցիչներ, որպեսզի արձանագրեին նկատված թերություններն ու բացթողումները: Աշակերտների համար շատ հետաքրքիր էր խաղ խաղալ այս նոր մեթոդով: Ես կարծում եմ, որ դասը արդյունավետ անցավ:
Դաս 2. Երկրորդ դասարանը, որը ես պետք է փորձարկեի համընկավ առաջին դասարանի Ա ա հնչյուն տառի ուսուցման հետ: Սկզբում աշակերտները արտասանեցին իրենց սովորած բանաստեղծությունները, այնուհետև ես անցկացրեցի իմ պատրաստած դասը, որը ամբողջությամբ պատրաստել էի ՏՀՏ գործիքներով: Աշակերտները շատ ոգևորվեցին դրանից: Տնօրենը և մնացած ուսուցիչները ևս նկատեցին աշակերտների ակտիվությունը՝ հասկանալով այն, որ խաղերի միջոցով անցկացրած դասերը ավելի մեծ արդյունք են տալիս:

Դաս 3. Երրորդ դասը փորձարկեցի 2-րդ դասարանում: Այս դասարանում աշակերտներն ավելի պասիվ էին, բայց երբ սկսեցի դասը՝ հագեցած տարբեր մեթոդներով, նրանք կամաց-կամաց ակտիվացան, սկսեցին հարցեր առաջադրել միմյանց՝ ստանալով գեղեցիկ և հստակ ձևակերպումներ: Այստեղ աշակերտները կաշկանդվում էին դասալսող ուսուցիչներից, բայց ընթացքում դա էլ վերացավ:

Եզրակացություն

Ուսուցումը առավել արդյունավետ է,

երբ դա ուրախություն է պատճառում:

Պ. Կլայն

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որի գլխավոր նպատակն է. գիտելիքի, մշակույթի, գիտակցության, հմտությունների համատարած, ներառական, նորարարական և հանրամատչելի զարգացման և յուրացման միջոցով ունենալ քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ քաղաքացի, ում համար իրավունքների իրացումը նույնքան կարևոր է, որքան

պարտականությունների կատարումը, ով առաջին հերթին իրեն է համարում սեփական բարեկեցության և առողջության պատասխանատուն:

Հայաստանի Հանրապետությունում հատկապես վերջին տարիներին շարունակաբար իրականացվում են կրթության ոլորտի բարեփոխումներ, որոնք հիմք են հանդիսանում լուծելու առկա խնդիրների լուծման և կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման համար:

Մենք, ափսոս, շատ կարճ ժամանակ ենք ունեցել գրելու այս հետազոտական աշխատանքը, որպեսզի մեր փորձարկած դասերի առավելություններն ու թերությունները ավելի ակնառու տեսնեինք: Ավարտելով այն՝ եկա այն եզրակացության, որ խաղերի միջոցով աշակերտներն ավելի ակտիվ են անցկացնում ուսումնական գործընթացը: Նրանք դեռ փոքրիկ են և պետք է խաղալով սովորեն ամեն նոր նյութը: Ճիշտ է՝ աշակերտների համար մի քիչ դժվար էր համակարգչով խաղեր խաղալը, բայց ես նկատեցի, որ նրանց շատ դուր եկավ: Այդ իսկ պատճառով ես որոշեցի հետագայում ավելի մանրակրկիտ հետազոտել և ավելի շատ անցկացնել այսպիսի դասեր, որպեսզի ուսուցումը ավելի արդյունավետ լինի: Ներկաները ևս նշեցին իմ թերությունները, և ես հասկացա և հետագայում նաև ինձ վրա կաշխատեմ, որպեսզի վերացնեմ այդ թերությունները: Ուսուցիչները նշեցին, որ ես ավելի շատ էի խոսում և միջամտում աշակերտներին, որպեսզի չհասկացած նյութը բացատրեի:Ես նույնպես զգացի և քանի որ այսօրվա ուսուցումը ավելի շատ աշակերտակենտրոն է, ուրեմն՝ մենք պետք է ավելի քիչ խոսենք, քան աշակերտները: Նրանք միմյանց հետ խաղալով ավելի լավ կսովորեն իրենց ուժերին համապատասխան: Ես այդ փորձերից հասա այսպիսի արդյունքի՝

- Աշակերտների ակտիվությունը մեծացավ դասապրոցեսին
- Ուսումնական գործընթացի մեջ բոլոր աշակերտները ներգրավվեցին
- Ինքնուրույն մտածելու ունակությունները զարգացան
- փորձեցին ինքնուրույն ինչ-որ աշխատանք կատարել

Ես այս դասերը ևս մեկ անգամ կփորձարկեմ, բայց արդեն տարբեր դասարաններում և այս հետազոտական աշխատանքի շուրջ կխորացնեմ իմ գիտելիքները:

Գրականության ցանկ

1. Նախաշավիղ գիտամեթոդական ամսագիր 2.2015
2. ՀՀ օրենսգիրք